ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հոկտեմբերի 2014 թվականի N 378-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանարապետության օրենքի 7-րդ հոդվածի և Հայաստանի Հանարապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասի, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ և Ջովունի համայնքների բնակիչների դիմումները՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել՝ Գևորգ Մկրտչյանին 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ և Հայկանուշ Սիմոնյանին 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ, միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2014 թվականի հոկտեմբերի 14
ք. Հրազդան

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզպետի
2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 378-Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

Հ/Հ	Անուն Ազգանուն	Բնակավայր	Գումարը	Ծանոթություն
1	Գևորգ Մկրտչյան	գ. Լեռնանիստ	40 000	
2	Հայկանուշ Սիմոնյան	գ. Ջովունի	40 000	